ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 4 » փետրվարի 2026 թվականի N: 37 - Ա ք. Գյումրի

ՎԵՐԱ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 25 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N:181-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության, տնօրենի նշանակման և բողոքարկման, փորձաշրջանի սահմանման կարգի» 6-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու թիվ 25 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Վերա Մկրտչյանի 2026 թվականի հունվարի 29-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վերա Մկրտչյանին 2026 թվականի փետրվարի 4-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու թիվ 25 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող՝ մինչև այդ պաշտոնում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մրցույթի արդյունքներով տնօրենի ընտրությունը (նշանակումը):

Դ.ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է